




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

633.7

0 - 60

7974

165

**ԾԽԱԽՈՏԻ ՍԱԾԻԼՆԵՐԻ
(շիրիկների) ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Հաստատված է, Վոր դաշտում ծխախոտի վրա առաջացած հիվանդությունների մեծամասնությունը սկիզբն է առնում տնկարաններից - Ջերմանոցներից, այդ պատճառով նրա վնասատուների և հիվանդությունների առաջն առնելու համար, առաջին հերթին հենց տնկարանների մեջ պետք է նախազգուշական միջոցներ ձեռք առնել:

Նորարույս ծխախոտի մատղաշ տերևները խիստ զգայուն են, ուստի տաք և չոր յեղանակներին՝ և մշակման սկզբնական շրջաններին անզիտակ հողատարությունից շատ են փշանում:

Ծիշտ է, չորանալը և դրա հետևանքով տնկարանի խիստ նոսրանալը՝ բույսերի անհամեմատ քնքշության և արմատների աակավին թուլության հետևանք են: Սակայն ծխախոտի սածիլի (շիթիլի) վրա հաճախ յերևան են գալիս բազմատեսակ վարակիչ հիվանդություններ վոր փչացնում են սածիլները (շիթիլները) զեռ. Ջերմոցում (պարնիկներ մեջ) յեղած ժամանակ և վոր հիվանդությունները հաճախ սածիլների միջոցով տեղափոխվում են դաշտի վրա. այդ յերևույթը ծխախոտի վորակը և բերքը ցածրացնելով՝ կարող է հսկայական վնասներ տալ:

Այդպիսի հիվանդություններ բույսի վրա առաջանում են մասնավոր բուսական որպանիչների—պարազիտների (բակտերիաների—բորբոսների) միջոցով. վորոնք սառածվում են կենդանի բույսի զանազան հյուսվածքների (ցողունների, տերևների և արմատների) մեջ և ավերածություններ առաջացնելով՝ փոչնչացնում են:

Սածիլի (շիթիլի) համար այդ հիվանդություններից ամենավտանգավորներն են մանուպանդ 1) սածիլի փտախուր (распадная гниль) 2) արմատի փտախուր (корневая гниль) և 3) մի շարք վարակիչ հիվանդություններ, վորոնց բնահանգիս լեզվով բյաբուխա են անվանում, այսինքն՝ ծխախոտի տերևները չեչոտում են:

Ջերմոցների մեջ հիվանդությունների տարածումը յերբեմն այնպիսի լուրջ կերպարանք է բնդունում, վոր ծխախոտագործը յերբեմն կարող է բոլորովին առանցի սածիլների մնալ: Այդ պատճառով էլ շարունակ և ուշադրությամբ պետք է հետևել թե ինչ վրձակի մեջ և սածիլը և չեն՝ յերևում արդյոք նրա վրա հիվանդության նշաններ:

ՍԱԾԻԼՆԵՐԻ ՓՏԱԽՏԸ:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ. Ջերմոցներում, կամ ածուների մեջ, առաջին հայացքից տեղ-տեղ յերևում են թառամած սածիլներ, վորոնք հետզհետե ավելի ուժատալառ են լինում և վերջապես չորանում—փշանում են: Քիչ ժամանակ անցնելուց հետո, հիվանդությունը հետզհետե տնկարանի մեջ մեծ չափերի է հասնում, այնպես վոր, վերջ ի վերջո կարող է հիվանդանալ ամբողջ տնկարանը, վորից բոլոր սածիլները կ'փոչնչանան:

Ինչ է պատճառը. Մանրակրկիտ դիտողությունների ժամանակ նկատվում է՝ վոր հիվանդ սածիլի վրա նստած է գառլինի գույնի՝ կամ մոխրագույն մի փոշի: Փոշուսած բույսերի մի մասն արդեն թեքվել են գետին, մյուսների ցողունները կամ տերևների կոթերը վորևեկողմից նոր սկսել են փառլառի ազդեցության յենթարկվել: Հողի յերեսը այդ տեղերում թաց և ու լորձոլանում:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. Այդ հիվանդությունը հաճախ յերևան է գալիս այն ժամանակ, յերբոր ծխախոտարույսերն արդեն բավականի մեծացել են և տնկարանի մեջ այնքան է բուսականությունը բարձրացել, վոր ինքն իրանից ներկայացնում է վորպես բնքուշ կանաչից կազմված մի համառարած գորգ: Հիվանդությունը առաջանում է մասնավոր բորբոսից, (մակարոյձային սունկներից): Դա մի բուսական պաշրազիտ է, վորին գիտական լեզվով ԲԻՏԻՈՒԻՐ են անվանում:

Այդ բորբոսը (պարագիտը) մեծ մասամբ առաջանում է սածիլների ցողունների ստորին մասի վրա (հողի յերեսով) և փտեցնում է:

2002

2011

5-62
ՍՈՎԵՏՈՂՆԻԿ ԵՎ ԿՈՒՍՈՂՆԻԿ! ԳՆՐՆԱՆԱԳԵՄԻՆ ՔՈ ՀԱՐ-
ՎԱԾԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՎ ԳՈՒ ԿՅԵՐՍՁԻՍԱ-
ՎՈՐԵՍ ԳՅՈՒՎԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ
ԳՈՐԾԸ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐՐՈՐԴ — ՎՃՈՍԿԱՆ ՏԱՐՈՒՄ:

ԿՈՒՍՈՂՆԻԿ ԵՎ ԲԱՏՐԱՅԻ! ԱՐԹՈՒՆ ՅԵՂԵՔ! ԳԻՏԵՆԱ-
ԼՈՎ՝ ՎՈՐ ԳՆՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՂՆԱՄԻՆ ՉԳՏՈՒՄ Ե ԽԱՆ-
ԳԱՐԵԼ ՉԵՐ ՍԿՍԱԾ ԶԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱԶԽԱՏԱՆՔԸ:

Այդ հիվանդության զարգացման ու տարածմանը ոժանդակում են տաք և խոնավ
լեզանակները, սառիկները թանձրությունը և շերմոցները հողի չափազանց խոնավու-
թյունը:

Այդ բոլորի հետևանքով՝ ողի ազատ հոսանքի դիմացը կտրվում է, շիթիկների
արանքում կանգ է առնում տաք, խոնավ ու անպետք սղը, փորից բույսերը շնչարգել-
վում են, քնքշանում են և շուտով բորբոսից հիվանդանում:

ԱՐՄԱՏՆԵՐԻ ՓՏԱԽՏԸ:

Հիվանդությունը ՆՇԱՆՆԵՐԸ. Մառաղ հասակում սառիկը շերմոցների մեջ կամ
ածունների (продку) վրա դադարում և աճելուց և սկսում է դեղնել: Դա պատահում է
կամ ամբողջ շերմոցում միանգամից՝ կամ թե՛ տարբեր տարածություններ, մաս առ մաս,
կամ թե փոքր բծերով անկարանի փրկել մասում: Այդ բծերը առաժանապարհ մեծա-
նում են, միանում և ընդարձակվում:

Տերևները և նույնիսկ ամբողջ բույսի բաց կանաչավուն գույնը հեղհեղեղ բոլո-
րովին փոխվում է դեղնանում: Ենթա, սկզբում ավելի մառաղ սառիկները, իսկ հետո
զային բոլոր մնացածների տերևները խարաշաղ (сырели) գույն են ստանում և չորանում են:

Բոլոր սառիկները Միանգամից չեն չորանում այլ դրանց ավել կամ պակաս մասը,
նայած թե ինչպիսի չափերով և ուժով և տարածված հիվանդությունը: Վերջնականա-
պես դեռ չը չորացած բույսը դեռ շարունակում է ապրել և նոր տերևներ տալ (նույն
իսկ կանաչ)՝ վորոնց յեղերքներն ու ծայրերը դեղնավուն են լինում, իսկ հետո հեղհեղեղ
բոլորովին դեղնում են: Ենթա հիվանդում սառիկի ամբողջ արմատային կազմվածքը
խարաշաղանում է և մեռնում, սակայն հողի ամենավերին շերտերում նոր ծիլեր արձա-
կած լինելու շնորհիվ դեռ ապրում է և մի կերպ մնում: Յեթե այդ ծիլերը շատ են,
մի կերպ բույսն առողջանում է, բայց շատ յետաժամաց և լինում է ուշ հասունանում:

Հիվանդությունը ՊԱՏՃԱՆՆԵՐԸ. Արմատային փոսիտի հիվանդության պատճառ
է դառնում մի պարագիտ-բորբոսային սոճակ, վոր ՏԲԵԼՎԻՍ և կոչվում: Հիվանդու-
թյան պատճառ կարող են լինել նաև ուրիշ տեսակի բորբոսային սոճակներ կամ պարագիտ-
ներ, վորոնք մտնելով բույսի հյուսվածքների մեջ, ավերածություններ են առաջ բերում:
Վորպես արմատների մահացություն և չորանալու պատճառ կարող են ծառայել և
ուրիշ յերևույթներ, որինակ՝ յերրոր շատ փափուկ ու փրկուն վիճակի մեջ և մարգերի
(ածունների) կամ շերմոցի հողի վերին շերտը և չոր քամիներն ու արևի ճառագայթ-
ները սաստիկ ներգործում են բույսի արմատների վրա: Սակայն այդ որինակ հիվան-
դությունները վարակիչ չեն:

Հիվանդությունների առաջացման նպատակում են հետևյալ պայմանները.

- 1) Կավախառն ծանր և պաղ հողը.
- 2) Զափից ավելի ջրերը.
- 3) Ցուրտ յերանակն ավելորդ խոնավության հետ միասին և բույսի չափազանց
խոտեղությունը (թանձրությունը), վորի հետևանքով նա զրկված է բախարար լույսից և ողից:
- 4) Մշտական միևնույն շերմոցների և միևնույն հողի սպառնալուծումը սառիկներ ա-
ճեցնելու համար:

ՉԵՂՈՑՈՒԹՅՈՒՆ (РЯБУХА):

Հաճախ սառիկների և դաշտում ծխախոտի տերևների վրա յերեկան և գալիս բծեր
տերևները չիչտվում են: Բծերը սկզբում տարբեր գույնների, ձևերի և տարրեր մեծու-
թյան են լինում, որինակ՝ կոբաձե, մանյակաձե, անկյունավոր, զեղնավուն, ճերմակ,
դառնագույն, կամ թե տերևների յեղերքները կամ ծայրամասերը սկսում են չորանալ:
Հեղհեղեղ այդ հիվանդությունը զարգանալով՝ տերևները փչանում են ամբողջովին և
սառիկները վոչնչանում են:

Տերևները վրա՝ ամեն տեսակի չեղերի, բծերի և այրվածքների յերևան գալը,
յեթե վոր դրանք զանազան դեղեր և պարարտանյութեր գործածելուց առաջացած այ-
րվածքներ չեն, — պահանջում են ծխախոտագործից ամենալուրջ ուշադրություն, վորը
անմիջապես միջոցներ պիտի ձեռք առնել փոսիտի առաջն առնելու համար:

Հիվանդությունը ՊԱՏՃԱՆՆԵՐԸ. Հիվանդության պատճառները բազմազան են,
կարելի է թվել հետևյալները, նախ՝ վոր հողի և սառիկների վրա գտնվում են մանր-
միկրոսկոպիքական պարագիտներ, մակարույծներ կամ բակտերիաներ, վորոնք մտնում
են բույսի հյուսվածքների մեջ, նրանցով մնվում, զարգանում և ավերածություններ են
առաջ բերում: Դրան նպաստում են (ինչպես նաև ուրիշ հիվանդությունների ժամա-
նակ) սառիկների խոտեղությունը, հողի և շերմոցի ողի ավելորդ տաքությունը ու խոնա-
վությունը, անձրևային յեղանակները, ավելորդ և անկանոն ջրերը և ժամանակին հա-
մապատասխան նախազուլուծությունների զանցառումը:

ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋ և ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ:

Բոլոր հիվանդությունների առաջն առնելու համար ամենալավ և ազդու միջոցն է
հենց սկզբից գործադրել բոլոր նախազուլուծական միջոցները, որինակ.

1) Տաք ջրով խաշել կամ թունավորել հողը (բոլոր գոյմա անելու
համար) պատրաստած զոմաղրային փոսիտի և առհասարակ շերմոց մեջ գործա-
դրվող բոլոր նյութերը:

2) Ցանկուց առաջ թունավորել տերմերը (հունները) ազոտաթթվառային արձա-
թի լուծույթով: (азотная кислота серебро)

Մի մաս ազոտաթթվառային արձաթի լցնում են 1000 մաս ջրի մեջ լուծում:
Բարակ կտորից կարծած տաղրակի մեջ լեցնում են տերմերը և իջեցնում լուծույթի մեջ,
10 րոպեից հետո հանում են և մաքուր ջրով լավ լվանում են: լվանալուց հետո՝ անմի-
ջապես չորացնում են: Ազոտաթթվառային արձաթով թունավորած տերմերը կարելի է
ցանկուց առաջ ձեղնել:

Յեթե ազոտաթթվառային արձաթ չճարվի, կարելի է գործածել անդիական քլորիդ, (су-
лема) վորի 1 — մասի վրա նույնպես լցնում են 1000 — մաս ջուր: Բոլոր աշխատանքը
կատարվում է նույնպես, ինչպես ազոտաթթվառային արձաթի լուծույթով թունավորելու ժա-
մանակ, տարբերությունը նրանում է միայն, վոր անդիական քլորիդով թունավորած
տերմերը չի կարելի ցանկուց առաջ ձեղնել:

Բավականին գովելի միջոց է նաև ծխախոտի հիվանդությունների դեմ պայքարե-
լու համար գործածել բորբոսի հեղուկը (бордоская смесь) վորը բոլոր տեսակի
հիվանդությունների առաջն առնում է:

1% — բորբոսի հեղուկը պատրաստում են այսպես. վերցնում են 200 գրամ պղնձի
արջապ (մեղմիկ կապրոս) և լուծում են 10 լիտր ջրի մեջ, (այդ բանի համար չպի-
տի գործածել մետաղե ամաններ) մի ուրիշ ամանի մեջ չհանգած կիր (негашенная из-
весть) և մի քիչ ջրով հանգցնում են: Հանգցնելուց հետո, քիչ անց, ավելացնում են
վրան 10 լիտր ջուր: Այդ յերկու լուծույթն էլ՝ համահավասար ծորեցնելով՝ լցնում են
մի յերրորդ ամանի մեջ: Այդ խառնուրդը ամախալ պատրաստելու դեպքում առաջվում
է յերկնագույն — բաց կապույտ սուղակ (տակուցը) և անգույն մի հեղուկ:

Այդպիսով պատրաստած բորբոսի հեղուկը գործածում են միայն թարմ վիճակում
և հսկողակում մի անգամ թեթե չաղ են տալիս սառիկների վրա:

Արևի վատ ազդեցությունից խուսափելու համար, նորարողը սառիկների վրա
պետք է շաղ տալ վաղ առավոտյան՝ կամ յերեկոյան:


Այն տեղերը, վորտեղ վոր սառիկները հիվանդացել են ԲԻՏԻՈՒՄԻՅ, պետք է բոր-
գուր հեղուկով հիմնավոր կերպով ջրցանել — հակահեխել: Միևնույն ժամանակ պետք է
նույն հեղուկով ջրցանել նաև վարակված տեղի շրջակայքի առողջ յերևացող բույսերը:

Այն տեղերը, վորտեղ յերևում են այս կամ այն հիվանդության նշանները, կարե-
լի է հիմնավորապես հակահեխել նաև ֆորմալինի (формалин) 1 : 25 — լուծույթով:

Յերբեք չպետք է հիվանդ բույսերը արմատախիլ անել և հենց նույն տեղում թափել,
այլ պետք է հովաքել և ծխախոտագործներից հետո փրկել տեղում վոչնչացնել (այրել):

Զամբյուղներն ու արկիները (կարգիկաները և յաշիկները) վորոնցով շիթիկները
տարվում են դաշտ անկելու համար, պետք է յերբեմն հակահեխել ֆորմալինի 1 : 25 —
լուծույթով, իսկ ուրիշ ժամանակները, այդ ամանները վոչ մի դեպքում չպետք է ձգել
այն պահանքների կամ ամբարների մեջ, վորտեղ սովորաբար չորանում են կամ ամբար-
րում են ծխախոտը:

Չեչ կամ քյարուխա կոչված բազմա յիվանդություններ կարելի է հիվանդ բույսե-
րից առողջների վրա փոխադրել ձեռքերի, գործիքների և մշակման գանազան անոթ-
ների միջոցով:



36351-66

5665-4.6

Այդ պատճառով էլ, ինքանդոտ ածուներում (մարգերում) աշխատելուց հետո պ
և պղնձի արջասպի (медный купорос) լուծույթով ձեռքերը լվանալ: Այդ լուծու
պատրաստում են 300—գրամ պղնձի արջասպը լուծելով 12—լիտր ջրի մեջ:

Ինտիմումով հիվանդ շերմոցները պետք է ողի ազատ հոսանքի ազդեցության յեն-
թարկել և մի առժամանակ ջրելուց դադարել, վորպես զի սաժիլները (շիթիլները) մի
փոքր կոշտանան և ամրանան:

Արմատների փոխարին հանդեպ, պետք է նախապատրաստված շերմոցային խառ-
նուրդով հոգկոծել (բողազ դոլմա անել) վորպես զի բույսերը նոր ծլեր ու արմատներ
արձակեն:

ՍԱԾԻԼՆԵՐԻ ՎՆԱՍԼՏՈՒՆԵՐԸ:

Սաստիկ վիշտ և տհաճություն պատճառող ֆնասանումն, վոր յերևում է անկարա-
նի մեջ, դա թրթուրն է, վորին մեղվեղկա կամ կապուստանկա են անվանում: Այդ
միջատները կեր գտնելու նպատակով տնկարանների հողի վերին շերտերը անընդհատ
ակոսում են և իրանց համար անցքեր բաց անում: Անցքերի վրայի հողի բարակ շեր-
տը բարձրանում է, դրանից ել սաժիլը այգալիսի տեղերում թառամում—թուխ գույն է
ստանում և նույն իսկ բոլորովին չորանում է:

Այդ թրթուրի դեմ պայքարելու համար գործածում են փարիզյան կանաչը (па-
рижская зелень): Այդ նպատակի համար վերցնում են մի կշռամաս փարիզյան կանաչ
և հինգ կշռամաս ցորենի ալյուր, միասին լավ խառնում են, խառնելուց հետո ավելաց-
նում են մի քիչ արևածաղկի յուղ և քիչ ջուր, այգալիսով պատրաստում են թանձր
խմոր: Այդ խմորից պատրաստում են սիսեռի մեծությամբ գնդակներ, կարելի է մի քիչ
ավելի մեծ շինել գնդակները: Այդ թուղամբ գնդակները մոտավորապես մեկ սանտի-
մետր խորությամբ տեղավորում են տնկարաններում, գլխավորապես միջատների ակո-
սած ծակերի մեջ:

Միջատները կարող են շերմոցի մեջ մուտք գործել, գոմաղբային փթանյութը
շերմոց բերելու հետ միաժամանակ, այդ պատճառով ել անհրաժեշտ է նախ փթանյու-
թի մեջ գտնվող միջատները վռնչացնել:

Բացի այդ պետք է աշխատել վոր շերմոցները շինվեն այնպիսի տեղերում, ուր
ֆնասակար միջատները անհամեմատ սակավ են:

Սաժիլները բոլորովին ընտրահան անելուց և շերմոցները դատարկելուց հետո,
պետք է այդ շերմոցները անհամեմատ մաքուր վիճակի մեջ պահել թե մոխրատերից և
թե ամեն տեսակ աղբակույտներից ու զիբիլներից, վորովհետև այդ աղբակույտների տակ
կարող են բնակություն հաստատել ու բազմանալ ֆնասակար միջատները:

Բոլոր տար ու կիսատար տնկարանները, վորոնց մեջ տաքությամբ համար դար-
սրված եր գոմաղբ կամ ծղտաներ, սաժիլների հանելուց ու տնկարանը պարպելուց հետո,
պետք է քանդել և ծղտաները, գոմաղբն ու նույն նպատակի համար գործադրվող բոլոր
նյութերը բոլորովին հեռացնել:

Բացի հիշյալ մեղվեղկա կոչվող միջատից, խոշոր ֆնասներ և տալիս նաև խլուր-
դը (գաշտամուկը): Մոտավորապես 5 սանտիմետր խորությամբ նա բոլոր ուղղությու-
ններով փորում և իրա համար անցքեր բաց անում: Եյդ անցքերի տեղերը գետնի յերե-
սից թեպետ դժվարությամբ, բայց նշմարվում են վոր հողի յերեսը փաթը ինչ բարձ-
րացածոե ու այդ տեղերում ել տունկերը թառամել են:

Բացի այդ անցքերից, խլուրդը իրա համար բուն և շինում. բները հեշտ և գտնել
նրանք գտնվում են գետնի յերեսին գոյացած փոքրիկ հողակույտների տակ:

Նլուրդի դեմ պայքարելու համար շատ միջոցներ կան, յերբեմն հողակույտը շար-
ժվում է ու հայտնվում թե խլուրդը վորտեղ և գտնվում. այդ դեպքում անմիջապես
բահով հողը դեն են պցում, խլուրդը հանում ու սատկեցնում: Յերբեմն թակարդներ են
գնում. անցքերի մեջ ջուր են լցնում և նույն իսկ հրացանադարկ են անում:

Նլուրդներին բռնելու համար մասնավոր գործիքներ են շինում, այգալիս՝ 5 սանտի-
մետր հաստությամբ ունեցող մի փայտի վրա ամրացնում են 12 սանտիմետրանոց ա-
սեղներ, վորոնցով՝ հենց բների մեջ խլուրդներին սատկեցնում են:

Նոր կյանք կառուցանող ընկեր! Լայն մասսաներին հարվածայնության
և սոց-մրցման մեջ ներգրավելով՝ կովիր ծուլություն և թեմբեկության
դեմ, վորոնք քո աշխատանքի առջև խոչնդոտներ են հարուցանում:

